ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N252-Ա

« 16 » ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023Թ

ԱՂԱՎՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՂԱՎՆԱՁՈՐԻ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՆՐԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով և հիմք ընդունելով Աղավնի Մանուկյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. 2023 թվականի նոյեմբերի 17-ից Աղավնի Մանուկյանին ազատել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:

2. 2023 թվականի նոյեմբերի 17-ից Աղավնի Մանուկյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում Աղավնի Մանուկյանին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

Recoverable Signature

ՌՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Signed by: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ք.Եղեգնաձոր